

ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ ԵՎ ԿԻԲԵՐԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԳՀԳ առարկայից

7-րդ դասարան

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ

- Հետազոտել համացանցի առավելությունները և թերությունները, ինչպես նաև կիրառանվտանգության կանխարգելման միջոցները

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ

Ներկայացնել կիրառանվտանգության կարևորությունը թվային միջավայրում

ՀՄՏՈՒԹՅՈՒՆ

- Տիրապետել ժամանակակից աշխարհում համակարգչային վիրուսներին, կիրառանվտանգության առանձնահատկություններին և դրանց կանխարգելման հիմնական ուղղություններին և մեթոդներին

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մասնակցությամբ տեսանյութի նկարահանում, պաստառի պատրաստում, սահիկաշար, բուկլետ

ԻՆՉՊԵՍ ԴԱՐՁՆԵԼ ՄԵՐ
ԱՇԽԱՏԱՆՔԸ
ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ ԱՆՎՏԱՆԳ
ԵՎ ԱՊԱՀՈՎ



Համացանցը նախ և առաջ բազմատեսակ ինֆորմացիայի կուտակման ու պահպանման հզոր պահեստ է.որտեղ կարելի է ցանկացած բնագավառի վերաբերյալ տեղեկատվություն գտնել: Համացանցը արդեն հեղափոխել է աշխարհը: Միննույն ժամանակ, համացանցի տված հնարավորությունները անհնար է ամբողջությամբ կիրառել. անհնար է տիրապետել ամբողջ ինֆորմացիային: Այսօր ապահով համացանցը մարդու կյանքում ամեն ինչ է՝ գրադարան, ամսագիր, հեռուստացույց, երաժշտություն լսելու, ֆիլմեր դիտելու, գնումներ կատարելու ձև, նույնիսկ «խաղահրապարակ»:





Համացանցի առավելությունները

- Տեղեկատվության կարևոր աղբյուր
- Իրական ժամանակում հաղորդակցություն առանց սահմանների
- Ինտելեկտի ,ստեղծագործական կարողությունների զարգացում
- Հեռավար ուսուցման հնարավորություն
- Ճաշակի ձևավորում

Համացանցի թերությունները

- Համացանցից ստացված տեղեկատվությունը կարող է սխալ լինել
- Մարդը կարող է մտնել վիրտուալ աշխարհ և ձեռք բերել կախվածություն
- Խաբեություն կազմակերպության կողմից
- Կան նաև բազմաթիվ վիրուսներ, որոնք վարակում են համակարգիչը

ՓՈԽՎԵ՛ՆՔ, ՄԻԱՎՈՐՎԵ՛ՆՔ ՀԱՆՈՒՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՀԱՄԱՑԱՆՑԻ



Ժամանակակից մարդուն համացանցը անհրաժեշտ է որպես
տեղեկատվություն ստանալու, հաղորդակցվելու միջոց:





ՕԳՏԱԳՈՐԾԵՆՔ ՀԱՄԱՑԱՆՑԸ ՄԻՄԻԱՅՆ
ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՐ:ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ
ԼԻՆԵԼ ԽՈՀԵՄ, ՏԱՐԲԵՐԱԿԵԼ ԼԱՎԸ ՎԱՏԻՑ:

Մարդը մշտապես ընտրության իրավունք ունի: Մեծամասամբ ինքն է որոշում, թե ինչն է լավ իր համար, թե ինչպես կարողանա իրեն դրսևորել, ինչ է ուզում ստանալ...

Համացանցը կարող է լինել ն' լավ ընկեր, ն' թշնամի, կարող է օգնել նեղության մեջ կամ էլ առաջացնել հսկայական խնդիրներ, կարող է օգնել գտնելու համախոհներ կամ էլ տանել մենության...

Ընտրությունը ձե՛րն է...

Ինչու՞ է կիրքերանվտանգությունը կարևոր:


Մենք ապրում ենք թվային դարաշրջանում, որտեղ անհնար է մեր կյանքը կազմակերպել առանց թվային հարթակների, միևնույն ժամանակ թվային հարթակները լի են բազմաթիվ վտանգներով, որոնց մասին պետք է տեղյակ լինեն բոլորը և իրենց համար փորձեն ստեղծել ապահով թվային միջավայր:



Ամենատարածված հարձակումը ֆիշինգն է: Սրա նպատակն է մարդկանց գաղտնաբառերի յուրացումը: Այն տեղի է ունենում հետևյալ կերպ. հաքերները պատրաստում են արդեն իսկ գոյություն ունեցող հայտնի կայքին արտաքինապես նման կայք, ուղարկում են մարդկանց, որոնք, չգուշակելով անգամ դրա կեղծ լինելը, մուտքագրում են իրենց տվյալները և հայտնվում ծուղակում:

Պաշտպանվելու հիմնական եղանակն ուշադրությունն է: Ուշադիր լինել, օրինակ, կայքի հասցեին. facebook.com-ի փոխարեն կարող է պատահել facebook.com տարբերակը և այլն:

Այսօր տեղեկատվական պատերազմները տարածվել են ամբողջ աշխարհում և համարվում են հզոր զենք: Ժամանակակից աշխարհը պատերազմ է վարում մի քանի ուղղություններով՝ ներառյալ համացանցը՝ տեղեկատվական պատերազմ, կիրքերհարձակումներ:








SHOT ON REDMI 9
AI QUAD CAMERA



SHOT ON REDMI 9
AI QUAD CAMERA



SHOT ON REDMI 9
AI QUAD CAMERA



SHOT ON REDMI 9
AI QUAD CAMERA

Ինչպե՞ս կարելի է խուսափել վիրուսներից:

-Վիրուսներից ամենալավ պաշտպանությունն օպերացիոն համակարգի անընդհատ թարմացումն է:

-Ինչպե՞ս կարող է պաշտպանել իր անձնական տվյալները օգտատերը:

-Հիմնական և մեծ խորհուրդն է չօգտվել հանրային WI FI-ից, դնել բարդ գաղտանաբառեր, քանի որ սովորաբար մարդիկ հեշտ հիշելու համար բոլոր կայքերում օգտագործում են նույն գաղտանաբառը, ինչն անընդունելի է:

-Հետաքրքրեց հատկապես հանրային WI FI-ից չօգտվելու հանգամանքը, քանի որ բոլորս շտապում ենք գտնել բաց WI FI ին միանալ: Ուրեմն ինչո՞ւ խուսափել սրանից:

-Հանրային WI FI-ի վրա չկա գաղտանաբառ, և թրաֆիքը փոխանցվում է ոչ կոդավորված տեսքով: Այսինքն յուրաքանչյուր հաքեր կարող է հեշտությամբ այդ WI FI -ի միջոցով հետևել յուրաքանչյուրիս:

- ▶ ԹԹՎԱԾԻՆԸ ՕՔՍԻԴԱՑՆՈՒՄ Է ՄԵՏԱՂՆԵՐԸ:
- ▶ ՀԱՄԱՑԱՆՑԻՑ ՈՉ ՃԻՇՏ ՕԳՏՎԵԼԸ ՕՔՍԻԴԱՑՆՈՒՄ Է ՄԱՐԴԿԱՆՑ ՈՒՂԵՂՆԵՐԸ:
- ▶ ԿԵՆԴԱՆԻ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՀԱՄԱՐ ԽԻՍՏ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԹԹՎԱԾԻՆ:
- ▶ ՀԱՄԱՑԱՆՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԿԱՊ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆՑԻ ՀԵՏ:



Սթրեսներ, ժամանց, համացանց

Ո՞վ ենք, ի՞նչ ենք, ինչո՞ւ մենք:

Լուրեր, հյուրեր, ծանոթ, բարեկամ

Կյանք է սա իրական, թե պատրանք միայն :

Թվեր, բայթեր, փիքսելներ

Երբեք կախված չենք եղել այսքան:

Ո՞վ ենք մենք հիմա այս կյանքում

Ու՞ր ենք գնում, ի՞նչ ենք երագում:

Ուզում ենք գտնել նոր աշխարհ,

Ուզում ենք կրկին ապահով համացանց,

Բայց նայում ենք այս անդեմ էկրանին

Վիրտուալ, թե ռեալ

Այս ստեղծված աշխարհում,

Խճճված այս ցանցում,

Դու ունես ընտրություն,

Այն քոնն է, միայն քոնը:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարում համացանցը ժամանակակից մարդու համար հոսանքի և ջրի պես կարևոր է: Սոցիալական ցանցերը այնքան են գրավում մարդկանց, որ մարդիկ չեն զգում, թե ինչպես են «սպանում» ժամանակը, որը կարելի էր ավելի օգտակար ու հետաքրքիր տնօրինել: Սոցիալական ցանցում միշտ վտանգ կա հանդիպելու վնասակար տեղեկությունների, որոնք կարող են դրդել թմրամիջոցներ օգտագործելու, ինքնասպանության : Սոցիալական ցանցերում բավականաչափ սխալ տեղեկատվության պատճառով համացանցում անցկացրած ժամանակը մի քանի անգամ ավելանում է: Այս ամենը բացասաբար է անդրադառնում ինքնազգացողության, ֆիզիկական և հոգեբանական առողջության վրա: Համացանցը ոչ ապահով տիրույթ է, որպեսզի չդառնանք կիբեռհանցագործների զոհը, պետք է լինենք ավելի զգույշ և հետևենք կանոններին, որոնց մասին մենք խոսեցինք: Իրական կյանքը և համացանցային կյանքը միմյանցից տարբերվում են, պետք է զգոն լինել և չվստահել ինչպես իրական կյանքում անձանոթներին, այնպես էլ համացանցում:

Նախագծային աշխատանքի արդյունքում եզրահանգեցինք այն գաղափարին, որ համացանցում և իրական կյանքում վտանգները գրեթե նույնն են, երկուսն էլ կարող են հանգեցնել վատ հետևանքների: Այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում ընտրել ապահով գաղտնաբառեր, չբացել անձանոթ հաղորդագրություններ և հղումներ, միացնել երկփուլային պաշտպանությունը:

Եղե՛ք միշտ տեղեկացված և հետևե՛ք անվտանգության կանոններին:

Շնորհակալություն ուշադրության համար

